Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի երկրորդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, ինչպես նաև չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, շինության զբաղեցրած հողամաս ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով հողամասի և շինության հատակագծերը՝ տրված «Ջիվան Հարությունյան Արսենի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2024 թվականի օգոստոսի 5-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2024EQQESV), շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ դրական եզրակացությունը տրված «ՍԵՅՄՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2024 թվականի հոկտեմբերի 31-ին, շինությունը կատարած անձ՝ Մնացական Գևորգի Գրիգորյանի 2025 թվականի հունիսի 5-ի N 2640 դիմումը. **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղում գտնվող, 39.0 քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա գտնվող՝ 39.0 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը, ճանաչել Փարաքար համայնքի սեփականությունը և օրինականացնել՝ համաձայն «Ջիվան Հարությունյան Արսենի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերի:

2. Հողատարածքին և առկա շինությանը տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մուսալեռ, Անի թաղամաս, 2/6 ավտոտնակ (ծածկագիր 04072VEDSEUW):

3. Հաշվի առնելով, որ կառույցն իրականացվել է Մնացական Գևորգի Գրիգորյանի կողմից և ընդունվել է առաջարկը՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու հողամասը և շինությունները Մնացական Գևորգի Գրիգորյանին ուղղակի վաճառքով օտարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղի Անի թաղամաս, 2/6 հասցեում գտնվող 0.0039 հեկտար մակերեսով հողամասը՝ առկա շինություններով:

4. 39.0 քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխել որպես բնակելի կառուցապատման հող: Համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

5. Ինքնակամ կառույցի օրինականացման և վաճառքի համար վճարը սահմանվում է յուրաքանչյուր մեկ քառակուսի մետր ավտոտնակի համար 1969 դրամ, վճարման ենթակա գումարը կազմում է 76 791 (յոթանասունվեց հազար յոթ հարյուր իննսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ, որը ենթակա է վճարման Փարաքար համայնքի Մուսալեռ բնակավայրի վարչական եկամուտների 900325176155 հաշվեհամարին:

6. Մեկ քառակուսի մետր հողամասի օտարման վճարը սահմանվում է 4441,8 դրամ, որը 39.0 քառակուսի մետրի համար կկազմի 173 230,20 (մեկ հարյուր յոթանասուներեք հազար երկու հարյուր երեսուն Հայաստանի Հանրապետության դրամ քսան լումա) Հայաստանի Հանրապետության դրամ, որը ենթակա է վճարման Փարաքար համայնքի Մուսալեռ բնակավայրի ֆոնդային եկամուտների 900325176130 հաշվեհամարին:

7. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 15

գ. Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ. Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

# Ո Ր Ո Շ Ու Մ

15 սեպտեմբերի 2025 թվականի N 779-Ա

## ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈւ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով «Ալեքսանդր Մանուկյան» անհատ ձեռնարկատիրոջ կողմից 2025 թվականի սեպտեմբերի 2-ին տրված հողամասի բաժանման սխեման և հողամասի համասեփականատերեր Կարեն Սերյոժայի Հունանյանի և Բորիկ Աղասու Հունանյանի 2025 թվականի սեպտեմբերի 8-ի N 4444 դիմումը. **որոշում եմ՝**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի վարչական սահմաններում գտնվող՝ Կարեն Սերյոժայի Հունանյանին և Բորիկ Աղասու Հունանյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 04-094-0064-0003 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի կողմ 1-ին՝ (1.Առանձնացվող հողամաս) 0.10617 հեկտար մակերեսով հողամասին և առկա շինություններին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Կոմունայի փողոց, 6/2 բնակելի տուն:

2.Նույն հողատարածքի՝ կողմ 2-ին՝ (2.Առանձնացվող հողամաս) 0.02292 հեկտար մակերեսով հողամասին և առկա շինությանը տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Կոմունայի փողոց, 6/1 բնակելի տուն:

3.Նույն հողատարածքի՝ կողմ 3-ին՝ (3.Առանձնացվող հողամաս) 0.01399 հեկտար մակերեսով հողամասին և առկա շինությանը տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Կոմունայի փողոց, 6/4 խանութ:

4.Նույն հողատարածքի՝ կողմ 4-ին՝ (4.Առանձնացվող հողամաս) 0.04442 հեկտար մակերեսով հողամասին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Կոմունայի փողոց, 6/3 հողամաս:

5.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 15
գ. Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

15 սեպտեմբերի 2025 թվականի N 780-Ա

**ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով «Ջիվան Հարությունյան Արսենի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից 2025 թվականի սեպտեմբերի 1-ին տրված հողամասի բաժանման սխեման և հողամասի համասեփականատեր Աշոտ Վազգենի Ստեփանյանի և մյուսների 2025 թվականի սեպտեմբերի 2-ի N 4365 դիմումը. **որոշում եմ՝**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի վարչական սահմաններում գտնվող՝ Աշոտ Վազգենի Ստեփանյանին և մյուսներին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ 04-094-0066-0015 կադաստրային ծածկագրով հողամասի կողմ 1-ին՝ (Առանձնացվող հատված 1) 0.0319 հեկտար մակերեսով հողամասին և առկա շինություններին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Երևանյան փողոց, 32 բնակելի տուն:

2.Նույն հողատարածքի՝ կողմ 2-ին՝ (Առանձնացվող հատված 2) 0.0064 հեկտար մակերեսով հողամասին և առկա շինությանը տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Երևանյան փողոց, 32/2 տնտեսական շինություն:

3.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2025 թ. սեպտեմբերի 15
գ. Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

16 սեպտեմբերի 2025 թվականի N 781-Ա

### ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի ԹԻՎ 472-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով քաղաքացի Վանուշ Սասունիկի Ասատրյանի և մյուսների 2025 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 4545 դիմումը. **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 2025 թվականի հունիսի 10-ի «Բնակելի տան նկատմամբ գույքային իրավունքները վերականգնելու, ավել հողամաս օտարելու և հասցե տրամադրելու մասին» N 472-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝

1) որոշման նախաբանում «N 19 քաղվածքը » բառերից հետո լրացնել՝ «ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը /գրանցված են սեղանամատյանում 4896-ով/ և 4897-ով/» բառերը և թվերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2025 թ. սեպտեմբերի 16
գ. Փարաքար

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

16 սեպտեմբերի 2025 թվականի N 782-Ա

# ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ ենթակետերով, 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, նկատի ունենալով, որ կառույցն իրականացվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանափակումների ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման ընթացքում կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված փաստացի օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Այգեկ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1991 թվականի մարտի 13-ի թիվ 4 որոշման մասին 2025 թվականի օգոստոսի 6-ին տրված N 13 քաղվածքը, «Ջիվան Արսենի Հարությունյանի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից 2025 թվականի հուլիսի 18-ին տրված հողամասի և շինության հատակագիծը, քաղաքացիներ Նազիկ Մարատի Հովհաննիսյանի և մյուսների 2025 թվականի սեպտեմբերի 2-ի N 4368 դիմումը. **որոշում եմ՝**

1.Վերականգնել՝ Նազիկ Մարատի Հովհաննիսյանի (ծնված 1970 թվականի նոյեմբերի 1-ին), Նելլի Պայքարի Հովհաննիսյանի (ծնված 1988 թվականի հոկտեմբերի հունիսի 4-ին) և Վազգեն Պայքարի Հովհաննիսյանի (ծնված 1990 թվականի օգոստոսի 30-ին) սեփականության իրավունքները Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Այգեկ գյուղում գտնվող գույքային միավորների՝ 1990 թվականին կառուցված բնակելի տան/նկուղ/, 1990 թվականին կառուցված բնակելի տուն, 1990

թվականին կառուցված բաց պատշգամբ, 1990 թվականին կառուցված օժանդակ շինություն, 1990 թվականին կառուցված ավտոտնակ և 1990 թվականին կառուցված պարիսպ՝ 04-009-0003-0039 կադաստրային ծածկագրով՝ 0.084 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ, համաձայն «Զիվան Հարությունյան Արսենի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հատակագծի: Նշված հողամասից 700.0 քառակուսի մետրը հատկացված բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս է, 140.0 քառակուսի մետր մակերեսով հողամասը առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման ընթացքում կադաստրային քարտեզագրման արդյունքում անշարժ գույքի չափի 20 տոկոսն է:

2. Հողատարածքին և շինությանը տրամադրել հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Այգեկ 1-ին փողոց 2 բնակելի տուն, (04032SWB2GFQ):

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 16
գ. Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 սեպտեմբերի 2025 թվականի N 783-Ա

## ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 573-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով. **որոշում եմ՝**

1. Հաստատել Փարաքար համայնքի.

1) Աղետների ռիսկի կառավարման խորհրդի կազմը ՝համաձայն հավելված N 1-ի.

2) Աղետների ռիսկի կառավարման խորհրդի աշխատակարգը և գործառույթները՝ համաձայն հավելված N 2-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել Փարաքար համայնքի ղեկավարի 2024 թվականի սեպտեմբերի 25-ի «Փարաքար համայնքում աղետների ռիսկի կառավարման խորհրդի ստեղծման մասին» թիվ 573-Ա որոշումը:

3. Համայնքի ղեկավարի տեղակալ Թաթուլ Ստեփանյանին՝ սույն որոշման 1-ին կետով ստեղծված ԱՌԿ խորհրդի կազմում ընդգրկված պաշտոններում զբաղեցրած կամ նոր նշանակված անձանց 5-օրյա ժամկետում ծանուցել սույն որոշման մասին:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 16
գ. Փարաքար

Հավելված N 1
Արմավիրի մարզի
Փարաքար համայնքի ղեկավարի
«16» սեպտեմբերի 2025 թ-ի N 783-Ա որոշման

# ԿԱԶՄ
# ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

***Համայնքի աղետների ռիսկի կառավարման խորհրդի կազմը՝***

1. խորհրդի ղեկավար՝ Վալոդյա Լևոնի Գրիգորյան /համայնքի ղեկավար/,
2. խորհրդի ղեկավարի տեղակալ-տարահանման և պատսպարման պատասխանատու՝ Էդգար Հարությունի Մարգարյան /համայնքի ղեկավարի տեղակալ/,
3. խորհրդի քարտուղար-ազդարարման և իրազեկման պատասխանատու՝ Գայանե Լյովայի Մանուկյան /աշխատակազմի քարտուղար/,
4. խորհրդի անդամներ՝

1) ավագանի Հայկազ Համազասպի Սարգսյան,
2) ավագանի Օնիկ Արտավազդի Ախվերդյան,
3) բնակավայրի վարչական ղեկավարներ՝

ա. Այգեկ բնակավայրի վարչական ղեկավար՝ Լիլիթ Մարուքի Մարուքյան,
բ. Արևաշատ բնակավայրի վարչական ղեկավար՝ Գառնիկ Իշխանի Պողոսյան,
գ. Բաղրամյան բնակավայրի վարչական ղեկավար՝ Արթուր Հայկի Ավետիսյան,
դ. Թաիրով բնակավայրի վարչական ղեկավար՝ Անդրանիկ Ջանիբեկի Իվանյան,
ե. Մերձավան բնակավայրի վարչական ղեկավար՝ Աշոտ Երվանդի Զոհրաբյան,
զ. Մուսալեռ բնակավայրի վարչական ղեկավար՝ Սամվել Ավետիսի Փարֆարյան,
է. Նորակերտ բնակավայրի վարչական ղեկավար՝ Տարոն Հմայակի Դալողլանյան,
ը. Պտղունք բնակավայրի վարչական ղեկավարի՝ Հովհաննես Աշոտի Մխիթարյան:

4) ոլորտային պատասխանատուներ՝

ա. հրշեջ-փրկարարական աշխատանքների պատասխանատու՝ Ռուբեն Արմենի Սարգսյան,
բ. հասարակական կարգի պահպանման պատասխանատու Կառլեն Արտավազդի Հակոբյան,
գ. տրանսպորտային ապահովման պատասխանատու Հայկ Կամոյի Միրիբյան,
դ. կապի պատասխանատու՝ Տիգրան Ավետիսյան,
ե.բժշկական օգնության կազմակերպման պատասխանատու՝ Նարինե Մնացականի Գրիգորյան,
զ.կենսաապահովման կազմակերպման պատասխանատու՝ Հակոբ Գագիկի Միքաելյան,
է. էներգետիկ ապահովման պատասխանատու՝ Էլիգում Էլիգումի Պողոսյան,
ը.ինժեներական միջոցառումների ապահովման պատասխանատու՝ Վաղինակ Վարուժանի Եղիազարյան,
թ. կոմունալ ապահովման և դիակների ճանաչման, հուղարկավորման կազմակերպման ու հաշվառման պատասխանատու՝ Հարություն Գևորգի Գևորգյան,
ժ. անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/ միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող պատասխանատու՝ Լուսինե Յուրիկի Սիմոնյան:

Հավելված N 2
Արմավիրի մարզի
Փարաքար համայնքի ղեկավարի
«16» սեպտեմբերի 2025 թ-ի N 783-Ա որոշման

# ԱՇԽԱՏԱԿԱՐԳ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ

# ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

**1. ԱՌԿ խորհրդի աշխատակարգը.**

1) Սույն աշխատակարգով սահմանվում են Փարաքար համայնքի աղետների ռիսկի կառավարման խորհրդի լիազորությունների և գործառույթների իրականացման ընթացակարգերը:

2) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են Փարաքարի համայնքապետարանում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

3) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ քննարկվում են համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման և խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցերը կամ համայնքի ԱՌԿ պլանով սահմանված գործողությունների իրականացումը:

4) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ ԱՌԿ խորհրդի ոլորտային պատասխանատուները ներկայացնում են իրենց վերապահված ոլորտում կատարված աշխատանքները, առաջ եկած խնդիրները և առաջարկվող նոր միջոցառումները: Համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման ժամանակ պատասխանատու են իրենց ոլորտին վերաբերվող համայնքի ԱՌԿ պլանի բաժինների համար, ինչպես նաև համայնքի ԱՌԿ պլանի նախապատրաստական և արձագանքման մասերում իրենց կարգավորման ոլորտի միջոցառումների համար:

5) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են տարվա ընթացքում առնվազն երկու անգամ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

6) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերն արձանագրվում են քարտուղարի կողմից և ներառվում են համայնքի ԱՌԿ պլանում:

**1. ԱՌԿ խորհրդի ԱՌԿ նախապատրաստական գործառույթներն են՝**

1) համայնքի բնակչության, նյութական արժեքների պաշտպանության ապահովումը,

2) համայնքի վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտումը,

3) ԱՌԿ պլանի մշակումը, իրականացման ապահովումը, վերահսկումը,

4) Աղետների ռիսկի նվազեցման և աղետներին դիմակայելու կարողությունների զարգացումը,

5) համայնքում ԱՌՆ միջավայրի և մշակույթի ձևավորումն ու դրանց տարածումը,

6) աղետներին արձագանքման համակարգի ձևավորումն, այդ նպատակով փրկարարական, հրդեհաշիջման և անհրաժեշտ կենսապահովման միջոցների ձեռք բերման, կուտակման և նպատակային օգտագործման իրականացումը,

7) ԱՌԿ պլանի միջոցառումների ինտեգրման ապահովումը համայնքի զարգացման ծրագրում,

8) համայնքի վաղ ազդարարման համակարգի ստեղծումն ու վերջինիս պահպանումը,

9) «Դիմակայուն համայնք» ստեղծելու նպատակով ԱՌՆ գործընթացներում ուսումնական հաստատությունների և բնակչության ակտիվ ներգրավվածության ապահովումը,

10) բնակչության համար արտակարգ իրավիճակներում վարքականոնների և պարտականությունների տարածումը, դրանց կիրառման ապահովումը,

11) նախապատրաստումը համայնքի բնակչությանը կատարելու փրկարարական և հրդեհաշիջման պարզագույն աշխատանքներ,

12) հրդեհների կանխարգելման աշխատանքների իրականացումը՝ բնակչության իրազեկման և ուսուցման միջոցով,

13) վարժանքների կազմակերպումը և անցկացումը

14) աղետների ռիսկի կառավարման պլանի ճշգրտումը:

**2. ԱՌԿ խորհրդի ԱԻ արձագանքման գործառույթներն են՝**

1) համայնքի բնակչության ազդարարման իրականացումը,

2) արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվության փոխանակման իրականացումը,

3) համայնքի բնակչության տարահանման իրականացումը,

4) կազմակերպում է հատուկ կարիքավոր մարդկանց, հղի կանաց և երեխաների անվտանգ տարահանումը/պատսպարումը,

5) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է որոնման, փրկման և հրդեհաշիջման աշխատանքներ,

6) կազմակերպում է բնակչության նյութական և հասարակական արժեքների պահպանությունը, անվտանգության ապահովումը փրկարարական գործողությունների և տարահանման վայրերում,

7) դիակապտության, թալանի, բռնության և այլ հանցավոր երևույթների կանխման ապահովումը,

8) ճանապարհների մաքրման, կամուրջների վերականգնման և նոր տարանցիկ ճանապարհների հիմնման ապահովումը,

9) արտակարգ իրավիճակի հետևանքով առաջացած շինարարական աղբի մաքրման և տեղափոխման ապահովումը,

10) առաջին օգնության իրականացման ապահովումը,

11) սանիտարահիգիենիկ և համաճարակային վիճակի հսկողության ապահովումը,

12) բնակչությանը սննդով, ջրով, դեղորայքով և առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովումը,

13) ջրային և սննդամթերքի պաշարների կուտակումը և նպատակային օգտագործումը,

14) բնակչության կոմունալ-էներգետիկ ապահովումը,

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

**Ո Ր Ո Շ Ու Մ**

16 սեպտեմբերի 2025 թվականի N 784-Ա

## ՀՐԱՉՅԱ ԶԱՔԱՐԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ, նկատի ունենալով, որ հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՍԵՅՍՄՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2024 թվականի դեկտեմբերի 20-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 13082025-04-0004 վկայականը, հողամասի սեփականատեր Հրաչյա Զաքարի Մովսիսյանի լիազորված անձ Վյաչեսլավ Վալերիի Սարգսյանի կողմից 2025 թվականի սեպտեմբերի 9-ի N 4495 դիմումը. **որոշում եմ՝**

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Այգեկ գյուղի 6-րդ փողոց թիվ 10 հասցեում գտնվող՝ Հրաչյա Զաքարի Մովսիսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 04-009-0011-0015 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված՝ 13.35 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, 44.73 քառակուսի մետր արտաքին մակերեսով օժանդակ շինությունը, 23.27 և 24.93 քառակուսի մետր արտաքին մակերեսներով ծածկերը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «Էյջ Քեյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան և ծածկերի համար կազմում է 1422 Հայաստանի Հանրապետության դրամ, 1 քառակուսի մետր օժանդակ շինության համար կազմում է 853,2 Հայաստանի Հանրապետության դրամ: Վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 125 688

(մեկ հարյուր քանիհինգ հազար վեց հարյուր ութսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի Այգեկ բնակավայրի 900325155175 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 16
գ. Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

16 սեպտեմբերի 2025 թվականի N 785-Ա

### ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ ենթակետերով, 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղում գտնվող կառույցներն իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման ընթացքում կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված փաստացի օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը /գրանցված են սեղանամատյանում 8089-ով և 8090-ով/, Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1991 թվականի փետրվարի 2-ի թիվ 1 որոշման մասին 2025 թվականի օգոստոսի 6-ին տրված N 37 քաղվածքը, «Մելկար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված հողամասի և շինության հատակագիծը, քաղաքացի Թադևոս Սարգսի Մանուկյանի կողմից լիազորված անձ Վլադիմիր Մենտորի Իսրայելյանի և մյուսների 2025 թվականի սեպտեմբերի 10-ի N 4523 դիմումը. **որոշում եմ՝**

1.Վերականգնել՝ Թադևոս Սարգսի Մանուկյանի (ծնված 1958 թվականի մայիսի 18-ին), Մերի Թադևոսի Մանուկյանի (ծնված 1986 թվականի օգոստոսի 26-ին) և Հարի Թադևոսի Մանուկյանի (ծնված 1987 թվականի դեկտեմբերի 25-ին) սեփականության իրավունքները Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղում գտնվող գույքային միավորների՝ 1964 թվականին կառուցված բնակելի տան, 1964 թվականին կառուցված բնակելի տան բաց պատշգամբի կամ ատիճանահարթակի, 1998 թվականին կառուցված բնակելի տան, 1964 թվականին կառուցված բնակելի տան, 1964 թվականին կառուցված բնակելի տանն բաց պատշգամբի կամ ատիճանահարթակի, 1998 թվականին կառուցված բնակելի տան բաց պատշգամբի կամ ատիճանահարթակի, 1998 թվականին կառուցված օժանդակ շինության, 1998 թվականին կառուցված օժանդակ շինության բաց պատշգամբի կամ ատիճանահարթակի՝ 04-094-0060-0001 կադաստրային ծածկագրով՝ 0.106477 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ՝ համաձայն «Մելքար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից: Նշված հողամասից 1000.0 քառակուսի մետրը հատկացված բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն է, 64.77 քառակուսի մետր մակերեսով հողամասը առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման ընթացքում կադաստրային քարտեզագրման արդյունքում անշարժ գույքի չափի 20 տոկոսն է:

2. Հողատարածքին և շինությանը տրամադրել հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար Է. Թևոսյան փողոց, 24 բնակելի տուն (ծածկագիր 04012A4FPVAJ):

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանման կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 16
գ. Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 սեպտեմբերի 2025 թվականի N 786-Ա

## ՄԱՐՏԻՐՈՍ ՄՈՎՍԵՍԻ ԳՈՋԱՆՅԱՆԻՆ ԻՍԿՈՒՀԻ ՄՈՎՍԵՍԻ ԳՈՋԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 9-րդ կետի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետություն քաղաք Երևան, Ավան, Սայաթ-Նովա թաղամաս շենք 8/2 բնակարան 14 հասցեի բնակիչ Մարտիրոս Մովսեսի Գոջանյանի (ծնված՝ 1962 թվականի ապրիլի 25-ին, անձնագիր AX 0387656, տրված՝ 2024 թվականի հուլիսի 26-ին 006-ի կողմից) 2025 թվականի օգոստոսի 13-ի թիվ 4022 դիմումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի» 2025 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 8 նիստի թիվ 29 արձանագրությունը. ***Որոշում եմ՝***

1. Մարտիրոս Մովսեսի Գոջանյանին (ծնված՝ 1962 թվականի ապրիլի 25-ին, անձնագիր AX 0387656, տրված՝ 2024 թվականի հուլիսի 26-ին 006-ի կողմից, հաշվառված՝ Հայաստանի Հանրապետություն քաղաք Երևան, Ավան, Սայաթ-Նովա թաղամաս շենք 8/2 բնակարան 14 հասցեում) նշանակել խնամակալ՝ ԱՐԴ/0877/02/24 քաղաքացիական գործով 2025 թվականի հունիսի 30-ի վճռով անգործունակ ճանաչված Իսկուհի Մովսեսի Գոջանյանի (ծնված՝ 1957 թվականի հունվարի 10-ին, նույնականացման քարտ՝ 016050452, տրված՝ 2024 թվականի մայիսի 31-ին 006-ի կողմից, հաշվառված՝ Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ Փարաքար համայնք, գյուղ Մուսալեռ, Ֆր. Վերֆելի փողոց տուն 9 հասցեում) նկատմամբ:

2. Մարտիրոս Մովսեսի Գոջանյանին վերապահել իրավունք ի շահ խնամարկյալի, առանց հատուկ լիազորության հանդես գալ իր խնամարկյալի իրավունքների ու շահերի պաշտպանությամբ՝ ցանկացած անձանց հետ հարաբերություններում՝ ներառյալ դատարանում:

3. Որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ համայնքի ղեկավարին կամ ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ ՀՀ Վարչական դատարան:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում Մարտիրոս Մովսեսի Գոջանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 16
գ. Փարաքար

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

16 սեպտեմբերի 2025 թվականի N 787-Ա

**ՍԱՍՈՒՆ ԼԻՊԱՐԻՏԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով, 34-րդ, 37-րդ, 38-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 134-րդ, 135-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 02-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 9-րդ կետի 1-ին ենթակետի <<բ>> պարբերությամբ, 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի Գրիգոր Լուսավորիչ փողոց տուն 51 հասցեի բնակիչ Սասուն Լիպարիտի Հակոբյանի (ծնված՝ 1966 թվականի դեկտեմբերի 02-ին, նույնականացման քարտ՝ 012095733, տրված 2021 թվականի մարտի 22-ին 057-ի կողմից) 2025 թվականի սեպտեմբերի 04-ի թիվ 4401 դիմումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի <<Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի>> 2025 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 8 նիստի թիվ 30 արձանագրությունը. ***Որոշում եմ՝***

1. Սասուն Լիպարիտի Հակոբյանին (ծնված՝ 1966 թվականի դեկտեմբերի 02-ին, նույնականացման քարտ՝ 012095733, տրված 2021 թվականի մարտի 22-ին 057-ի կողմից) նշանակել հոգաբարձու՝ Մելինա Համլետի Հակոբյանի (ծնված՝ 2008 թվականի ապրիլի 08-ին, ծննդյան վկայական թիվ ԱԲ 588428) նկատմամբ:

2. Հսկողություն սահմանել Սասուն Լիպարիտի Հակոբյանի (ծնված՝ 1966 թվականի դեկտեմբերի 02-ին, նույնականացման քարտ՝ 012095733, տրված 2021 թվականի մարտի 22-ին 057-ի կողմից) գործունեության նկատմամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սասուն Լիպարիտի Հակոբյանին (ծնված՝ 1966 թվականի դեկտեմբերի 02-ին, նույնականացման քարտ՝ 012095733, տրված 2021 թվականի մարտի 22-ին 057-ի կողմից) պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2025 թ. սեպտեմբերի 16
գ. Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

17 սեպտեմբերի 2025 թվականի N 788-Ա

**ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով հողամասի սեփականատեր՝ Աշոտ Սարգսի Մելքոնյանի 2025 թվականի հուլիսի 15-ի N 3478 դիմումը. **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի վարչական սահմաններում գտնվող՝ Աշոտ Սարգսի Մելքոնյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0303-0044 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Մ. Գոշի փողոց, 25 հողամաս:

2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2025 թ. սեպտեմբերի 17
գ. Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

17 սեպտեմբերի 2025 թվականի N 789-Ա

**ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով հողամասի սեփականատեր՝ Մանվել Անուշավանի Բարսեղյանին 2025 թվականի օգոստոսի 15-ի N 4070 դիմումը. **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի վարչական սահմաններում գտնվող՝ Մանվել Անուշավանի Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0303-0042 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Մ. Գոշի փողոց, 21 հողամաս:

2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2025 թ. սեպտեմբերի 17
գ. Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 սեպտեմբերի 2025 թվականի N 790-Ա

## ՀԱՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈւ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով հողամասի սեփականատեր՝ Արմեն Սարգսի Ստեփանյանի 2025 թվականի օգոստոսի 28-ի N 4306 դիմումը. **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Արևաշատ գյուղի վարչական սահմաններում գտնվող՝ Արմեն Սարգսի Ստեփանյանին սեփականության իրավունքով պատկանող 04-026-0015-0001 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Արևաշատ, Նաիրիի փողոց, 35/1 հողամաս:

2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 17
գ. Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 սեպտեմբերի 2025 թվականի N 791-Ա

## ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով «Ջիվան Արսենի Հարությունյան» անհատ ձեռնարկատիրոջ կողմից 2025 թվականի սեպտեմբերի 4-ին տրված հողամասի բաժանման սխեման և հողամասի համասեփականատեր Վեհանուշ Հակոբի Քեշիշյանի կողմից տրված լիազորագիրը և լիազորված անձ Կարեն Ակտիվի Չոբանյանի 2025 թվականի սեպտեմբերի 5-ի N 4420 դիմումը. **որոշում եմ՝**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղի վարչական սահմաններում գտնվող՝ Վեհանուշ Հակոբի Քեշիշյանին, Նաիրա Վիրաբյանին, Հայկուշ Վիրաբյանին, Հակոբ Վիրաբյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող՝ 04-094-0074-0007 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի կողմ 1-ին՝ (Կողմ 1) 0.0814 հեկտար մակերեսով հողամասին և առկա շինությանը տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Թաիրով, Խ. Աբովյան փողոց, 1 բնակելի տուն:

2.Նույն հողատարածքի՝ կողմ 2-ին (Կողմ 2) 0.0049 հեկտար մակերեսով հողամասին և առկա շինությանը տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Թաիրով, Խ. Աբովյան փողոց, 1/1 ավտոտնակ:

3.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2025 թ. սեպտեմբերի 17

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

17 սեպտեմբերի 2025 թվականի N 792-Ա

# ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման Արմավիր-8 նախագիծը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 2-ի N 19-Ա որոշմամբ, քաղաքացի Արայիկ Գալուստի Մուրադյանի 2025 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 4628 դիմումը.
**որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան գյուղում գտնվող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ 04-065-0047-0026 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը այլ հող, 0.0212 հեկտար մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել որպես բնակելի կառուցապատման հող:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն, սույն՝ 0.0212 հեկտար մակերեսով հողամասը, հանել բնակավայրերի նպատակային նշանակության այլ հող գործառնական նշանակության հողերի հաշվեկշռից և ներառել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողերի հաշվեկշռում:

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Փարաքարի համայնքի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Հակոբ Միքաելյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 17
գ. Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

17 սեպտեմբերի 2025 թվականի N 793-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-Ի ԹԻՎ 496-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից 2025 թվականի սեպտեմբերի 4-ին տրված գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին N Կ-04092025-04-0164 որոշումը, քաղաքացի Գագիկ Մաթևոսի Աբգարյանի 2025 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 4583 դիմումը. **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 2025 թվականի հունիսի 13-ի «Գագիկ Մաթևոսի Աբգարյանի կողմից կատարած ինքնակամ շինությունների օրինականացման մասին» N 496-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ՝

1) որոշման 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան նկուղի, ծածկի, աստիճանի, յուրաքանչյուր մեկ ինքնակամ բացվածքի համար կազմում է 2725 Հայաստանի Հանրապետության դրամ, 1 քառակուսի մետր ծածկի և լողավազանի համար կազմում է 1635 Հայաստանի Հանրապետության դրամ: Վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 460 961 (չորս հարյուր վաթսուն հազար ինը հարյուր վաթսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2025 թ. սեպտեմբերի 17
գ. Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

17 սեպտեմբերի 2025 թվականի N 794-Ա

## ԼԻԼԻԹ ԳԱՌՆԻԿԻ ՄԱՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 7-րդ հոդվածի 4-րդ կետով, 10-րդ հոդվածի 5-րդ կետով , հիմք ընդունելով հողամասի սեփականատեր Լիլիթ Գառնիկի Մամյանի 2025 թվականի սեպտեմբերի 15-ի N 4585 դիմումը. **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան գյուղի Այգեգործների փողոց թիվ 1/2 հասցեում գտնվող, Լիլիթ Գառնիկի Մամյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 04-065-0012-0161 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման հողամասի վրա առկա 5.6 քմ մակերեսով շինության՝ խորդանոցի գործառնական նշանակությունը փոխել որպես՝ բնակելի տուն, իսկ առկա ինքնակամ բացված դուռը թողնել ինքնակամ՝ հիմք ընդունելով <<Կարեն Մաչանյան>> անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հողամասի հատակագիծը:

2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Փարաքարի համայնքի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Հակոբ Միքաելյանի վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 17
գ. Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 սեպտեմբերի 2025 թվականի N 795-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի երկրորդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, ինչպես նաև չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, շինության զբաղեցրած հողամաս ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով հողամասի և շինության հատակագծերը՝ տրված «Կարեն Մաչանյան» անհատ ձեռնարկատիրոջ կողմից, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2023 թվականի հունիսի 21-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023W5YF6M), «ՍԵՅՍՄՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2023 թվականի հունիսի 23-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, շինությունը կատարած անձ Հովսեփ Ասատուրի Ասատրյանի կողմից տրված լիազորագիրը և լիազորված անձ Արթուր Հովսեփի Ասատրյանի 2025 թվականի հունիսի 5-ի N 2610 դիմումը. **որոշում եմ՝**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղում գտնվող, 28.8 քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա գտնվող՝ 28.8 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը ճանաչել Փարաքար համայնքի սեփականությունը և օրինականացնել՝

համաձայն «Կարեն Մաչանյան» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերի:

2. Հողատարածքին և առկա շինությանը տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Թաիրով, Վ. Մամիկոնյան փողոց, 2-րդ փակուղի, 7 ավտոտնակ (ծածկագիր 04022NLR9EZ8):

3. Հաշվի առնելով, որ կառույցն իրականացվել է Հովսեփ Ասատուրի Ասատրյանի կողմից և ընդունվել է առաջարկը՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու հողամասը և շինությունը, Հովսեփ Ասատուրի Ասատրյանին ուղղակի վաճառքով օտարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղի Վ. Մամիկոնյան փողոց, 2-րդ փակուղի 7 հասցեում գտնվող 0.00288 հեկտար մակերեսով հողամասը՝ առկա շինությունով:

4. 28.8 քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխել որպես բնակելի կառուցապատման հող: Համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

5. Ինքնակամ կառույցի օրինականացման և վաճառքի համար վճարը սահմանվում է մեկ քառակուսի մետր ավտոտնակի համար 2725 Հայաստանի Հանրապետության դրամ: Վճարման ենթակա գումարը կազմում է 78 480 (յոթանասունութ հազար չորս հարյուր ութսուն) Հայաստանի Հանրապետության դրամ, որը ենթակա է վճարման Փարաքար համայնքի 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

6. Մեկ քառակուսի մետր հողամասի օտարման վճարը սահմանվում է 10513.8 դրամ, որը 28.8 քառակուսի մետրի համար կկազմի 302 797,44 (երեք հարյուր երկու հազար յոթ հարյուր իննսունյոթ Հայաստանի Հանրապետության դրամ քառասունչորս լումա) Հայաստանի Հանրապետության դրամ, որը ենթակա է վճարման Փարաքար համայնքի ֆոնդային եկամուտների 900325191139 հաշվեհամարին:

7. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 17

գ. Փարաքար

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

19 սեպտեմբերի 2025 թվականի N 796-Ա

**ԱՐՄԵՆ ՎԱԼՈԴԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ, ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման Արմավիր-8 նախագիծը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 2-ի N 19-Ա որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2022 թվականի սեպտեմբերի 29-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2022BCGMDL) և հողամասի սեփականատեր Արմեն Վալոդի Կարապետյանի 2025 թվականի մայիսի 14-ի N 2149 դիմումը. **որոշում եմ՝**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղի Շաղ-Տիրան Թեքեյան փողոց թիվ 44/1 հասցեում գտնվող, Արմեն Վալոդի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 04-069-0051-0002 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման 121.5 քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել որպես բնակելի կառուցապատման հող, նույն հողամասի վրա առկա 59.6 քմ մակերեսով շինության՝ խանութի գործառնական նշանակությունը փոխել որպես՝ բնակելի տուն:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն, սույն՝ 121,5 քառակուսի մետր մակերեսով հողամասը, հանել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողերի հաշվեկշռից և ներառել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողերի հաշվեկշռում:

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղի Շաղ-Տիրան Թեքեյան փողոց թիվ 44/1 հասցեում գտնվող, Արմեն Վալոդի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 04-069-0051-0002 կադաստրային ծածկագրով հողամասի վրա կառուցված՝ 2 ինքնակամ բացված դուռը՝ համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «Կարեն Մաչանյան» անհատ ձեռներեցի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծի:

4. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը յուրաքանչյուր ինքնակամ բացվածքի համար կազմում է 1969 Հայաստանի Հանրապետության դրամ: Վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 3938 (երեք հազար ինը հարյուր երեսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ:

5. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում՝ պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի Մուսալեռ բնակավայրերի 900325176155 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

6. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Փարաքարի համայնքի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Հակոբ Միքաելյանի վրա:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 19
գ. Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 սեպտեմբերի 2025 թվականի N 797-Ա

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ ենթակետերով, 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, նկատի ունենալով, որ կառույցն իրականացվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանափակումների ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման ընթացքում կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված փաստացի օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Նորակերտ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1994 թվականի մայիսի 11-ի թիվ 5 որոշման մասին 2025 թվականի օգոստոսի 26-ին տրված N 34 քաղվածքը, «Ջիվան Արսենի Հարությունյանի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից 2024 թվականի դեկտեմբերի 23-ին տրված հողամասի և շինության հատակագիծը, քաղաքացի Սամվել Աշոտի Ասոյանի և մյուսների 2025 թվականի օգոստոսի 22-ի N 4375 դիմումը. **որոշում եմ՝**

1.Վերականգնել՝ Սամվել Աշոտի Ասոյանի (ծնված 1957 թվականի մայիսի 5-ին), Զարիկ Ջումշուդի Լալայանի (ծնված 1962 թվականի մարտի 28-ին), Նունե Սամվելի Ասոյանի (ծնված 1981 թվականի նոյեմբերի 21-ին) և Հասմիկ Սամվելի Ասոյանի (ծնված 1983 թվականի ապրիլի 23-ին) սեփականության իրավունքները Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Նորակերտ գյուղում

գտնվող գույքային միավորների՝ 1985 թվականին կառուցված բնակելի տան, 1985 թվականին կառուցված բնակելի տան /նկուղ/, 1992 թվականին կառուցված ծածկի, 1992 թվականին կառուցված անասնաշենքի 04-074-0005-0020 կադաստրային ծածկագրով՝ 0.07 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ, համաձայն «Ջիվան Հարությունյան Արսենի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հատակագծի:

2. Հողատարածքին և շինությանը տրամադրել հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Նորակերտ Կոմկիտասի փողոց 72 բնակելի տուն, (04082SQQRK3H):

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 19
գ. Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 սեպտեմբերի 2025 թվականի N 798-Ա

## ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով «Մելկար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2025 թվականի սեպտեմբերի 2-ին տրված հողամասի բաժանման սխեման, հողամասի սեփականատեր Այ-Սուու Անդրեյի Կուուլարի կողմից տրված լիազորագիրը և լիազորված անձ Մուսա Մուսավի Շամսիի 2025 թվականի սեպտեմբերի 4-ի N 4530 դիմումը. **որոշում եմ՝**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Արևաշատ գյուղի վարչական սահմաններում գտնվող՝ Այ-Սուու Անդրեյի Կուուլարին սեփականության իրավունքով պատկանող՝ 04-026-0035-0005 կադաստրային ծածկագրով հողամասի կողմ 1-ին՝ (Առանձնացվող հողամաս 1) 0.04 հեկտար մակերեսով հողամասին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Արևաշատ, Երևանյան խճուղի, 68 հողամաս:

2.Նույն հողատարածքի՝ կողմ 2-ին՝ (Առանձնացվող հողամաս 2) 0.014 հեկտար մակերեսով հողամասին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Արևաշատ, Երևանյան խճուղի, 68/1 հողամաս:

3 Նույն հողատարածքի՝ կողմ 3-ին՝ (Առանձնացվող հողամաս 3) 0.04 հեկտար մակերեսով հողամասին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Արևաշատ, Երևանյան խճուղի, 68/2 հողամաս:

4.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 19
գ. Փարաքար

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

19 սեպտեմբերի 2025 թվականի N 799-Ա

**ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով «Ջիվան Հարությունյան Արսենի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից 2025 թվականի օգոստոսի 20-ին տրված հողամասի հատակագիծը. **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան գյուղի վարչական սահմաններում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ 0.00015 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մերձավան, Երևանյան խճուղի, 2/4 հողամաս:

2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2025 թ. սեպտեմբերի 19
գ. Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

19 սեպտեմբերի 2025 թվականի N 800-Ա

**ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով «ԱՐՓԻՆԵ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՄԱԴՈՅԻ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից 2025 թվականի սեպտեմբերի 6-ին տրված հողամասի բաժանման սխեման և հողամասի սեփականատեր Եղիշե Անանյաի Օհանյանի 2025 թվականի սեպտեմբերի 10-ի N 4516 դիմումը. **որոշում եմ՝**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Նորակերտ գյուղի վարչական սահմաններում գտնվող՝ Եղիշե Անանյաի Օհանյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 04-074-0026-0013 կադաստրային ծածկագրով հողամասի կողմ 1-ին՝ (Բաժանվող մաս N1) 0.07688 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Նորակերտ, Այգեգործների փողոց, 36/1 հողամաս:

2.Նույն հողատարածքի՝ կողմ 2-ին՝ (Բաժանվող մաս N2) 0.13231 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Նորակերտ, Այգեգործների փողոց, 36 բնակելի տուն:

3.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2025 թ. սեպտեմբերի 19
գ. Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

**Ո Ր Ո Շ Ու Մ**

19 սեպտեմբերի 2025 թվականի N 801-Ա

**ՄԻԱՆՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի N 21102013-04-0050 և N 26082025-04-0053 վկայականները և հողամասի սեփականատեր Կիմա Կարոյի Ղազարյանի 2025 թվականի օգոստոսի 28-ի N 4604 դիմումը **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան գյուղում գտնվող 04-065-0048-0027 և 04-065-0048-0039 կադաստրային ծածկագրերով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասերի միավորումից առաջացած անշարժ գույքին տալ մեկ միասնական հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մերձավան, Մուսալեռան փողոց, 27/1 բնակելի տուն:

2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 19
գ. Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

## Ո Ր Ո Շ Ու Մ

19 սեպտեմբերի 2025 թվականի N 802-Ա

## ԱՐՄԵՆ ԼԵՌՆԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ԵՎ ՄՅՈՒՍՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՍԵՅՍՄՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2025 թվականի ապրիլի 7-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2023 թվականի դեկտեմբերի 23-ին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023VAKU54) և հողամասի սեփականատեր Արմեն Լեռնիկի Մխիթարյանի և մյուսների 2025 թվականի օգոստոսի 19-ի N 4162 դիմումը. **որոշում եմ՝**

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղում գտնվող՝ Արմեն Լեռնիկի Մխիթարյանին, Լեռնիկ Արամայիսի Մխիթարյանին, Գոհարիկ Դավիթի Մխիթարյանին, Աննա Լեռնիկի Մխիթարյանին և Լյովա Լեռնիկի Մխիթարյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 04-094-0011-0011 կադաստրային ծածկագրով՝ 264.0 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, 32.4 քառակուսի մետր մակերեսով օժանդակ շինություն, և 21.2 քառակուսի մետր մակերեսով ծածկ՝ համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ Հակոբ Մարգարյան» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր ինքնակամ բնակելի տան համար կազմում է 2316 Հայաստանի Հանրապետության դրամ, 1 քառակուսի մետր օժանդակ շինության և ծածկի համար կազմում է 1389.6 Հայաստանի Հանրապետության դրամ: Վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 685 906,56 (վեց հարյուր ութսունհինգ հազար ինը հարյուր վեց Հայաստանի Հանրապետության դրամ հիսունվեց լումա) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Հողատարածքին և առկա շինությանը տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Թաիրով, Հ. Բաղրամյան փողոց, 1-ին նրբանցք, 6 բնակելի տուն (ծածկագիր 04022J5EQCJY):

4. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի Թաիրով գյուղի 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 19
գ. Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 սեպտեմբերի 2025 թվականի N 803-Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-Ի ԹԻՎ 676-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրված 2025 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ Կ-16092025-04-0076 որոշումը և քաղաքացի Վարդան Մերուժանի Աբաջյանի 2025 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 4641 դիմումը. **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 2025 թվականի հուլիսի 29-ի «Բնակելի տան նկատմամբ գույքային իրավունքները վերականգնելու, ավել հողամասը օտարելու և հասցե տրամադրելու մասին» թիվ 676-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝

1) որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Վերականգնել Վարդան Մերուժանի Աբաջյանի (ծնված 1954 թվականի ապրիլի 5-ին) սեփականության իրավունքները Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղում գտնվող գույքային միավորի՝ 1995 թվականին կառուցված բնակելի տան, 1995 թվականին կառուցված բնակելի տան, 1980 թվականին կառուցված աստ. հարթակի, 1980 թվականին կառուցված կիս. բնակելի տան/նկուղ/ և 04-094-0109-0022 կադաստրային ծածկագրով 0.1510 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ, իսկ հողամասում առկա 171.1 քմ մակերեսով կիսակառույց բնակելի տունը թողնել ինքնակամ: Նշված հողամասից 1200 քառակուսի մետր մակերեսով հողամասը հատկացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն է, 240.0 քառակուսի մետր մակերեսով հողամասը առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման ընթացքում կադաստրային քարտեզագրման արդյունքում անշարժ

գույքի չափի 20 տոկոսն է, իսկ 70.0 քառակուսի մետր մակերեսով հողամասն ավել օգտագործվող հողամասն է:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 22
գ. Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 սեպտեմբերի 2025 թվականի N 804-Ա

## ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱՅԻՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքի 109-րդ, 110-րդ հոդվածներով, «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 8-րդ կետի 3-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի թիվ 962-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Փարաքար համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 12-ին կայացած 8-րդ նիստի թիվ 30 արձանագրությունը և Սասուն Լիպարիտի Հակոբյանի դիմումը՝ համաձայն որի անչափահաս Մելինա Համլետի Հակոբյանը (ծնված՝ 2008 թվականի ապրիլի 08-ին, ծննդյան վկայական թիվ ԱԲ 588428) իր ծնողների՝ Մարիանա Պյոտրի Հակոբյանի (մահացած՝ 2024 թվականի հունվարի 18-ին, մահվան վկայական թիվ III-ДН 728982) և Համլետ Լիպարիտի Հակոբյանի (մահացած՝ 2025 թվականի օգոստոսի 23-ին, մահվան վկայական թիվ ԲԲ 037440) մահից հետո մնացել է առանց ծնողական խնամքի՝ ***որոշում եմ.***

1.Անչափահաս Մելինա Համլետի Հակոբյանին (ծնված՝ 2008 թվականի ապրիլի 08-ին, ծննդյան վկայական թիվ ԱԲ 588428) վերցնել սկզբնական հաշվառման՝ որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխա:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը՝ երեխայի ծննդյան վկայականի, անձնական քարտի, մոր և հոր մահվան վկայականների լուսապատճենները և մեկ լուսանկար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2025 թ. սեպտեմբերի 22
գ. Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

**Ո Ր Ո Շ Ու Մ**

22 սեպտեմբերի 2025 թվականի N 805-Ա

### ԼՈՒԻԶԱ ՌՈՒԲԵՆԻ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՍԵՅՍՄՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2023 թվականի դեկտեմբերի 8-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2023 թվականի դեկտեմբերի 8-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023H2ES2D), հողամասի սեփականատեր Լուիզա Ռուբենի Նիկողոսյանի կողմից 2023 թվականի դեկտեմբերի 12 -ի N 6017 դիմումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի մարզպետի 2025 թվականի սեպտեմբերի 12-ի 01/7/06482-2025 գրությունը. **որոշում եմ՝**

1.Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի Երևանյան փողոց թիվ 67 հասցեում գտնվող, Լուիզա Ռուբենի Նիկողոսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 04-094-0114-0029 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված՝ 84.6 քառակուսի մետր արտաքին մակերեսով կիսակառույց շինությունը համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «Ջիվան Հարությունյան Արսենի» անհատ ձեռնարկտիրոջ կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր կիսակառույց շինության համար կազմում է 4632 Հայաստանի Հանրապետության դրամ: Վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 391 867,20 (երեք հարյուր

իննսունմեկ հազար ութ հարյուր վաթսունյոթ Հայաստանի Հանրապետության դրամ քսան լումա) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի Փարաքար գյուղի 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 22
գ. Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք, ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 սեպտեմբերի 2025 թվականի N 806-Ա

### ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13-Ի N 122-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԳԱԳԻԿ ԳՐԻԳՈՐԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածով, 41-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 9-րդ կետի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Փարաքար համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 12-ին կայացած 8-րդ նիստի թիվ 31 արձանագրությունը և Արայիկ Գրիգորի Մկրտչյանի դիմումը. ***ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԱՐԴ/8873/02/23 քաղաքացիական գործով 2024 թվականի նոյեմբերի 15-ի վճռով անգործունակ ճանաչված անձի՝ Գագիկ Գրիգորի Մկրտչյանի (ծնված՝ 1988 թվականի սեպտեմբերի 14-ին, անձնագիր՝ AT 0490974, տրված 057-ի կողմից 2020 թվականի մայիսի 21-ին) խնամակալ Արայիկ Գրիգորի Մկրտչյանին ազատել խնամակալի պարտականությունների կատարումից:
2. Ուժը կորցրած ճանաչել Փարաքար համայնքի ղեկավարի 2025 թվականի փետրվարի 13-ի « Գագիկ Գրիգորի Մկրտչյանի նկատմամբ խնամակալ նշանակելու մասին» N 122-Ա որոշումը:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԱՐԴ/8873/02/23 քաղաքացիական գործով 2024 թվականի նոյեմբերի 15-ի վճռով անգործունակ ճանաչված անձի՝ Գագիկ Գրիգորի Մկրտչյանի (ծնված՝ 1988 թվականի սեպտեմբերի 14-ին, անձնագիր՝ AT 0490974,

տրված 057-ի կողմից 2020 թվականի մայիսի 21-ին) խնամակալությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին՝ մինչև նրան համապատասխան հաստատություն տեղավորելը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 22

գ. Փարաքար